ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 17 >> << մայիսի >> 2016թ. N 49
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Արտաբույնքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2014-2015 թ.թ.-ների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանի, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Նորայր Կարապետյանի, Հասմիկ Ավետիսյանի և Խիկար Խաչատրյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2016 թվականի մայիսի 18-ին, ավարտել 2016 թվականի մայիսի 24-ին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ